ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Կամոյի Մելիքյանի «Հայկական թեմը Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII – XVII դարերում» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայաստանի և Վրաստանի քաղաքական, հոգևոր և եկեղեցական կապերը և փոխհարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն: Այդ հարաբերությունները ժամանակի ընթացքում մերթ սերտացել են, մերթ՝ հեռացել: Հիշատակված ժողովուրդները, դեռևս վաղ անցյալում ստեղծելով իրենց պետությունները, հաճախ փորձել են միասնաբար հաղթահարել պատմության և օտար իշխանությունների լարած թակարդները և երբեմն էլ լուծում չունեցող խոչընդոտները՝ սատար լինելով մեկը մյուսին, միաժամանակ պահպանելով ազգային ինքնությունն ու նկարագիրը: Պաշտպանության ներկայացված ատենախոսության նպատակն է վեր հանել Հայոց եկեղեցական թեմերի կարգավիճակը ԺԲ - ԺԷ դդ. Վրաստանում: Թեմայի ղեկավարն է եղել երջանկահիշատակ միջնադարագետ և կովկասագետ, պրոֆ. Հ.Գ. Մարգարյանը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և ութ հավելվածներից: Ատենախոսն օգտվել է հայերեն, վրացերեն, ռուսերեն և անգլերեն մասնագիտական գրականությունից: Ատենախոսն 2017 – 2023 թթ. Երևանի համալսարանական ժողովածուներում և պարբերականներում հրապարակել է ատենախոսության տարբեր գլուխներին վերաբերող վեց հոդված:

Ատենախոսության թեմայի վերնագրում հիշատակված Այսրկովկասյան այս երկու ժողովուրդները Դ դարում հրաժարվելով հեթանոսական կրոնից, ընդունել են քրիստոնեություն և դարերի ընթացքում հավատարիմ են մնացել իրենց հավատամքին, թեպետ իրերի բերումով՝ Է դարից սկսած՝ հայտնվել են եկեղեցական տարբեր ճամբարներում՝ ստեղծելով ինքնուրույն նվիրապետական համակարգեր և պահպանելով կաթողիկոսական իշխանությանը ենթակա աստիճանակարգերը: Լինելով արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների սահմանագծում, այս ժողովուրդները դեռևս հին ժամանակներից ստեղծել են ինքնուրույն պետական կառավարման համակարգեր, որոնք

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Կամոյի Մելիքյանի «Հայկական թեմը Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII – XVII դարերում» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայաստանի և Վրաստանի քաղաքական, հոգևոր և եկեղեցական կապերը և փոխհարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն: Այդ հարաբերությունները ժամանակի ընթացքում մերթ սերտացել են, մերթ՝ հեռացել: Հիշատակված ժողովուրդները, դեռևս վաղ անցյալում ստեղծելով իրենց պետությունները, հաճախ փորձել են միասնաբար հաղթահարել պատմության և օտար իշխանությունների լարած թակարդները և երբեմն էլ լուծում չունեցող խոչընդոտները՝ սատար լինելով մեկը մյուսին, միաժամանակ պահպանելով ազգային ինքնությունն ու նկարագիրը: Պաշտպանության ներկայացված ատենախոսության նպատակն է վեր հանել Հայոց եկեղեցական թեմերի կարգավիճակը ԺԲ - ԺԷ դդ. Վրաստանում: Թեմայի ղեկավարն է եղել երջանկահիշատակ միջնադարագետ և կովկասագետ, պրոֆ. Հ.Գ. Մարգարյանը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և ութ հավելվածներից: Ատենախոսն օգտվել է հայերեն, վրացերեն, ռուսերեն և անգլերեն մասնագիտական գրականությունից: Ատենախոսն 2017 – 2023 թթ. Երևանի համալսարանական ժողովածուներում և պարբերականներում հրապարակել է ատենախոսության տարբեր գլուխներին վերաբերող վեց հոդված:

Ատենախոսության թեմայի վերնագրում հիշատակված Այսրկովկասյան այս երկու ժողովուրդները Դ դարում հրաժարվելով հեթանոսական կրոններից, ընդունել են քրիստոնեություն և դարերի ընթացքում հավատարիմ են մնացել իրենց հավատամքին, թեպետ իրերի բերումով՝ Է դարից սկսած հայտնվել են եկեղեցական տարբեր ճամբարներում՝ ստեղծելով ինքնուրույն նվիրապետական համակարգեր և պահպանելով կաթողիկոսական իշխանությանը ենթակա աստիճանակարգերը: Լինելով արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների սահմանագծում, այս ժողովուրդները դեռևս հին ժամանակներից ստեղծել են ինքնուրույն պետական կառավարման համակարգեր, որոնք

նպաստել են տեղական ինքնակառավարման և ազգային մշակութային հաստատությունների զարգացմանը: Նրանք ստեղծել են ազգային գիր և գրչություն, ինքնատիպ քրիստոնեական մատենագրություն և մշակույթ, որի հետազոտությամբ են զբաղվում աշխարհի տարբեր ակադեմիական և համալսարանական կենտրոններում: Արաբական տիրապետության շրջանում կորցնելով պետականությունը՝ նրանք պահպանել են ներքին ինքնավարությունը և մշակութային ինքնությունը: Տարածաշրջանից արաբների հեռացումից հետո, աստիճանաբար և միասնաբար վերականգնել են ազգային կառավարման տեղական համակարգերը և յուրաքանչյուրն իր եկեղեցու հետ համագործակցելով, մշակութային լայն դաշտ է ստեղծել և հեռանկարներ բացել ապագայի համար: Այս փուլում նկատվում է հայոց և վրաց պետական համագործակցության երկարատև գործընթաց, որն ուղեկցվեց սկզբում հայկական, ապա՝ վրաց Բագրատունիների տիրապետության հաստատմամբ, չնայած այս պետությունների միջև առկա էին որոշակի ծիսադավանաբանական տարաձայնություններ: Սելջուկյան ռազմարշավների նախօրեին, թեպետ Հայաստանը կորցրեց պետականությունը և իշխանական ընտանիքների մեծ մասն հեռացավ Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք, Հայոց եկեղեցին փորձեց ընդարձակել եկեղեցական նվիրապետության սահմանները ողջ Մերձավոր Արևելքում և Բալկաններում, ուր հաստատված էին հայկական բնակավայրեր: ԺԱ - ԺԲ հարյուրամյակը վրաց պետականության և մշակույթի վերելքի դարը դարձավ, իսկ Հայոց պետականությունը պատմության բերումով այդ նույն ժամանակաշրջանում սկսեց կրկին կայանալ Միջերկրական ծովի ափին՝ Բյուզանդական կայսրության լքած, Կիլիկիա երկրամասում: Ամենայն Հայոց կաթողիկոսարանն էլ հաստատվեց ոչ հեռու՝ Հյուսիսային Ասորիքում, Եփրատ գետի ափին գտնվող Հռոմկլա ամրոցում: Այնուամենայնիվ դա չէր նշանակում, թե հայ ժողովուրդը լքել էր իր բնօրրան՝ Մեծ Հայքը: Հայկական տեղական կառավարման համակարգերը հարատևում էին Տայքի, Կյուրիկյանների (Գուգարք), Արցախի, Սյունիքի, Այրարարատի, Նախիջևանի, Վասպուրականի, Բարձր Հայքի տարածքներում: Այդ իշխանություններից շատերը գտնվելով օտար պետությունների տիրապետության ներքո՝ համագործակցում էին Վրաց

թագավորության հետ, պահպանելով և զարգացնելով եկեղեցու նվիրապետական համակարգը: Մեծ Հայքի Հյուսիսային գավառներին տեր դարձած Վրաստանը ստիպված էր հաշվի նստել Հայոց ազնվականական տների, նրանց զինական ուժի և Հայոց եկեղեցու հետ:

Արաբական տիրապետության անկումից հետո, Հայաստանը ստեղծեց համաայսրկովկասյան պետական համակարգ Բագրատունյաց թագավորության տիրապետության ներքո: Այն համագործակցում էր Կախեթի և Արևմտյան Վիրքի պետական միավորների հետ: Հնուց ի վեր այդ տարածքներում գործում էին նաև Հայոց եկեղեցու թեմերը, սեփական դավանական և ծիսական համակարգով, որը ԺԲ դարում «հոգևոր առումով առանձնանալու անհրաժեշտություն» (էջ 3) չունեցավ: ԺԳ դարում Այսրկովկասն ընկավ մոնղոլական տիրապետության տակ, իսկ ԺԵ դարում այն նվաճեց Լենկ Թեմուրը, ապա՝ կարակոյունլուներն ու աղկոյունլուները, որոնց պետությունների հիմքի վրա բարձրացավ Սեֆյան Պարսկաստանը, ապա՝ հետզհետե տարածաշրջան ներխուժեցին Օսման թուրքերը: Հիշյալ դարաշրջանում Վրաստանը, ժամանակ առ ժամանակ նվաստացուցիչ պայմաններով, կարողացավ պահպանել իր կախյալ թագավորությունը: Դեռևս ինքնիշխանության տարրերը չկորցրած Հայոց իշխանական տները, սատարելով Ամենայն Հայոց կաթողիկոսարանին, հաճախ ծառայում էին տարածաշրջանի հզոր պետական միավորումներին: Հայոց եկեղեցու Վրաց թագավորությունների տարածքներում գտնվող բոլոր թեմերը ԺԲ – ԺԵ դարերում և դրանից հետո էլ ենթարկվում էին սկզբում Հռոմկլայում գտնվող, իսկ 1441 թ. հետո՝ Վաղարշապատ փոխադրված Ամենայն Հայոց կաթողիկոսության նվիրապետական համակարգին:

Ատենախոսի բերած նորույթը աշխատանքի ժամանակային տարածքում (ԺԲ - ԺԷ դդ.) Ամենայն Հայոց կաթողիկոսարանի Վրաց թագավորության սահմաններում առկա թեմերի գործունեության, դրանց մի մասի ստեղծման, նորոգության, հայկական ազգաբնակչության գործունեության, եկեղեցաշինության, քաղաքաշինության խնդիրներին է վերաբերում: Հեղինակը կարողացել է հաղթահարել վրացերենը և շրջանառության մեջ դնել մի շարք նոր վավերագրեր և սկզբնաղբյուրներ:

Այնուամենայնիվ, կարելի է համակարգված ձևով հիշատակել մի շարք դիտողություններ, որոնք չեն նսեմացնում կատարված աշխատանքը, սակայն հիմնականում գալիս են Հայաստանի այսօրվա կրթական, համալսարանական համակարգերից, Գիտության Կոմիտեի, ԲՈՀ-ի անհեթեթ որոշումներից և ակադեմիական վերամբարձ աշխատանքի թերություններից:

Օրինակ.

Ա/ Պատմագիտական դիտողություններ. Ատենախոսը կոնտեքստից դուրս է համարել Հայոց և Վրաց եկեղեցիների նախապատմությունը և ստեղծած նվիրապետական համակարգերը, չի անդրադարձել Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում Վրացական թեմերի տեղին և Հռոմկլայի աթոռի դերին: Ատենախոսության մեջ պատճառաբանված չէ. «Այլ էին ռուսական իշխանությունների մոտեցումները եկեղեցի-պետություն ինստիտուտների նկատմամբ, ինչը ևս հատկանշական չէր ԺԴ - ԺԷ դդ. Վրաստանին» (էջ 6) նախադասությունը: Հեղինակը հնարավորություն ուներ խորացնել ակադ. Աշոտ Հովհաննիսյանի. «...հաճախ մոնղոլները Վրաստանում իրենց դիրքերն ամրապնդելու համար լայն իրավունքներ էին շնորհում հայ ազնվականական ընտանիքներին՝ ի հակակշիռ վրացի թագավորների» (էջ 27) միտքը: Բարսեղ եպիսկոպոսն հիշատակվում է Հռոմկլայի ժողովում (1178 թ. !) գրված վավերագրում, որի հեղինակը Գրիգոր Դ Տղան է (էջ 31-32): Ըստ սկզբնաղբյուրների, Հովհաննես Սարկավագն իր առջև խնդիր է դրել ոչ միայն «...(Դավիթ Շինարար – Ա.Բ.) արքային ավելի բարյացկամորեն տրամադրել Վրաց թագավորության սահմաններում բնակվող հայության նկատմամբ» (էջ 40), այլ նաև ձգտել է ամրապնդել Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը երկրում: Ատենախոսն ըստ Լ. Մելիքսեթ-բեկի անդրադառնում է միայն 1197 թ. Ծռազատկին (էջ 44), սակայն հայտնի է, որ հնուց եկող այդ տոմարական շեղումը տեղի էր ունենում 95 տարին մեկ անգամ և խռովությունների տեղի է տվել ոչ միայն Վրաստանում, այլ նաև Փոքր Ասիայում, Բալկաններում և Պաղեստինում, ուր ապրում էին քրիստոնեություն դավանող բազմաթիվ ժողովուրդներ (էջ 44-45). հարցի մարքսիստական լուծումն այսօր ընդունելի չէ: Աշխատանքում երբեք չի ասվում այն մասին, որ Վրաստանում հայ բնակչություն կար անհիշելի ժամանակներից և որ հայերը

միայն «անտեր» փախստականներ չէին (էջ 63 նև.): Աշխատության մեջ անհասկանալի է Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռը Էջմիածին փոխադրելու տարին, չեն հիշատակված Գրիգոր Թ Մուսաբեկյանցի գահակալման տարիները աթոռի փոխադրությունից առաջ և հետո (էջ 77): Ենթադրում եմ, որ Սանահնի քյոթուկում հիշատակված Բարսեղ Անեցի կաթողիկոսը 1178 թ. Հռոմկլայի ժողովում հիշատակված Անիի արքեպիսկոպոսն է, որը ԺԲ դ. 90-ական թթ. որոշ արձանագրություններում հիշատակված է որպես «կաթողիկոս» (էջ 80-81): Չի ասվում, թե ի՞նչ առաքելություն էր իրականացնում Վարդան Արևելցին Հուլավու ղանի մոտ (էջ 48): Մի շարք ազգատոհմերի մասին խոսելիս՝ չի հիշատակված նրանց դավանական պատկանելությունը, հայտնի է, որ նրանցից շատերն ընդունել են կաթոլիկություն և վրացական ուղղափառություն (էջ 98 - 119):

Բ/ Եկեղեցաժիսագիտական-կանոնագիտական դիտողություններ. ինչպե՞ս է վանքը դառնում եպիսկոպոսանիստ (էջ 18 և շար.), չի տրված այդ երևույթի կանոնական հիմքերը, չի պարզաբանված «վիճակագործաց» տերմինը, որն հեղինակն անվանում է թեմական առաջնորդարան (էջ 33): Հերակլ արքան չէր կարող եպիսկոպոս ձեռնադրել (էջ 33), աշխարհականները չէին կարող պատարագ մատուցել (էջ 34), հեղինակը չի պարզաբանում, թե ի՞նչ է նշանակում «վրացադավան» տերմինը. չի օգտագործել աշխատություններ՝ նվիրված Սիմեոն Պղնձահանեցուն, քաղկեդոնական մշակույթին, եկեղեղեցու պատմությանը, կանոնագիտությանը և ծիսակարգին: Ի՞նչ սկզբնաղբյուրային հիմքով է Տփղեաց ավագ երեց Տերտերն անվանվում վարդապետ (էջ 47): Չի բացատրված, թե ի՞նչ է նշանակում «հայ առաքելական թեմ» արտահայտությունը, «կաթողիկէ» չի նշանակում միայն առաջնորդանիստ (էջ 64 նև.): Եկեղեցին չէր կարող միջնադարում անվանվել վանք (էջ 70 նև.): Բացատրված չէ «մեռելոյ վերարկոյի» ծիսական խնդիրը (էջ 91), դրան հանդիպում ենք միայն Վրաստանու՞մ : Ի՞նչ է նշանակում «նվիրական» թեմ (էջ 93 նև.):

Գ/ Հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող դիտողություններ. Հեղինակը չի պարզաբանում, թե ինչպե՞ս է պատկերացնում Մ. Լորդկիպանիձեն «Հայոց և Վրաց եկեղեցիների ամուր հիմքեր» ստեղծելու

գործընթացը (էջ 41 և շար.): Հեղինակը չի անդրադառնում, թե ինչ դավանության էր պատկանում Տողուզ Խաթունը (էջ 46), այստեղ արժեր օգտագործել մոնոդոլական արշավանքների դարաշրջանին վերաբերող «Բազմավէպ»ի հատուկ համարը (2010, 3-4): Հեղինակը չի պարզաբանում, թե ինչո՞վ էր արտացոլվում «վրաց ժողովրդի գրկաբացությունը փախստական հայերի նկատմամբ» (էջ 57): Հիմնավոր փաստարկներ չեն բերված առ այն, որ Վրաց թագավորության մեջ տարբեր ակնոցներով են դիտվել Սանահնի և Հաղբատի աթոռները, հայոց եպիսկոպոսարանը չէր կարող լինել Վրաց թագավորի հովանու ներքո (էջ 83): Հեղինակի ուշադրությունից վրիպել են բազմաթիվ հայկական ազնվականական ընտանիքներ, որոնց ցանկերը տրված են ԺԹ դ. սկզբի Տփղիսի ռուսալեզու մամուլում (տե՛ս Վ. Բաստամյանց, «Կանոնագիտական երկեր»ի առաջաբանը) և սկզբնաղբյուրներում: Ատենախոսության մեջ չմարսված միտում կա Վրաստանը դիտել «արտերկիր» (էջ 120 նն.): Կարծում եմ բավարար է հարևան երկիր կամ պետություն բնորոշումը:

Գ/ Աշխարհագրական և տեղանուններին վերաբերող դիտողություններ. հեղինակը չի օգտագործել Գուգարքի և Մեծ Հայքի աշխարհագրությանը վերաբերող վերջին տարիների հետազոտությունները (էջ 20) նն.: Չի ասված, թե ԺԳ դարի ո՞ր սկզբնաղբյուրում է հիշատակված Գյուրջիստանի վիլայեթը (էջ 28): Հիշատակվում է Քուրդ Մահկանաբերդցին, սակայն չի հիշվում նրա դերը Տփղիսի Հայոց պատմության մեջ (էջ 29): Մողնի թե՞ Մուղնի (էջ 65 նն.). կա՞ն արդյոք այդ հաստատությունների միջև կապեր: Չի բացատրված վրաց մատենագրության մեջ «Սոմխեթ» և «Սոմխիթ» աշխարհագրական տեղանունների կիրառության դրդապատճառները և այսօրվա ընկալումները (էջ 96-97):

Դ. Մանր-մունր դիտողություններ. Դիսերտանտի ղեկավար Հ. Մարգարյանը դարերն ու դասական թվականները կգրեր, հետևելով հայերեն այբուբենին: Հեղինակը արևելյան սկզբնաղբյուրները հիշատակելիս պիտի հետևեր հայ պատմագրական ավանդույթին, ասորի պատմիչ մափրիան Բարհեբրեուսը հանիրավի չպետք է դառնար արաբ (էջ 10, 27), պիտի նշվեր, որ

«Հոդուդ էլ ալ-ալեմի»-ն անանուն հեղինակի երկ է, հայկական սկզբնաղբյուրները պետք է հղվեին բնագրով, ներածությունում պետք է հիշատակվեին նաև վրաց սկզբնաղբյուրների բոլոր գիտական հայերեն թարգմանությունները, ցանկալի էր տեսնել նաև դարաշրջանի հիմնական ուղղեգրություններից (օր. Շարդեն, Սուլխան Սաբա Օրբելիանի, Քեմպֆեր և ուրիշներ) հղումներ: Աշխատանքում չի հիշատակված պրոֆ. Հ.Գ. Մարգարյանի դոկտորական դիսերտացիան (քանի որ եղել է ինչ որ «Մեծ գիտնականների» բարձի տակ), անտեսված են ԺԳ – ԺԵ դդ. Մեծ Հայքի տարածքում ստեղծված մահմեդական պետությունների մասին աշխատանքները (օր. Հայոց Պատմություն, հտ. I, գիրք II, Եր., 2014; Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. Բ ևն.): Հղումները պիտի կատարվեին բնագրի լեզուներով հրատարակությունների վրա: Դասական հայերենով բնագրերը հայագիտական աշխատանքներում չեն հանդուրժում առանց բնագրի հիշատակման արևելահայերեն և այլ լեզուներով թարգմանությունների հղումներ: Տոմարական թվականները պետք էր գրել մայրենի լեզվով, իսկ հաշվարկը՝ կատարել արաբական թվանշերով, և այսօր օգտագործվող տարեթվերով (էջ 58): Չի օգտագործված «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» (2001 թ.) հոդվածների ժողովածուն: Մեկ-երկու անգամ են հղված և չեն մարսված Գ. Մայսուրաձեի և Շ. Մեսխիայի աշխատանքները (էջ 14, ծան. 67, 71):

Կարծում եմ, որ գրախոսվող ատենախոսությունը նորույթ է հայագիտության մեջ, իսկ հեղինակի թափած աշխատանքն, անկասկած, համապատասխանում է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ներկայացրած պահանջներին, և արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստճանին:

պ.գ.դ. Ազատ Բոզոյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Արևելյան սկզբնաղբյուրների և պատմագրության բաժնի վարիչ

15.12.2023 թ.

Հաստատում եմ Հայագիտության ԳԱԱ ՀԱԻ գիտքարտուղար

15.12.2023թ.